Հավելված

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության հանրային
ծառայությունները կարգավորող
հանձնաժողովի
2007թ. հունիսի 15-ի № 274Ն որոշմամբ

ԵՐԿԴՐՈՒՅՔ ՍԱԿԱԳՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ (ՀԶՈՐՈՒԹՅԱՆ) ԱՌՈՒՎԱՃԱՌՔԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ՀԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Սույն սկզբունքները տարածվում են էլեկտրաէներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա ունեցող այն անձանց (այսուհետ՝ ընկերություն) վրա, որոնց նկատմամբ կիրառվում է երկդրույք սակագնային համակարգ:

1. Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի լիցենզիա ունեցող անձը (այսուհետ՝ համակարգի օպերատոր) իրականացնում է էլեկտրաէներգետիկական համակարգի տարեկան պլանավորումը, կազմում է էլեկտրաէներգետիկական համակարգի էլեկտրական էներգիայի և հզորության հաշվեկշիռները (ամսական կտրվածքով) և ընկերության հետ համաձայնեցված որոշում է տվյալ տարվա ընթացքում ներքին պահանջարկի բավարարման և անհրաժեշտ համակարգային ռեզերվների ապահովման համար ներգրավվող հիմնական սարքավորումների կազմը:

2. Ընկերությունը համակարգի օպերատորի համաձայնությանն է ներկայացնում տարեկան ծրագրով նախատեսված սարքավորումների նորոգումների իրականացման ծրագիրը և ժամանակացույցը:

3. Յուրաքանչյուր ընկերության համար տվյալ ամսվա էլեկտրաէներգիայի (հզորության) առուվաճառքի պայմանագրային հզորություն է համարվում հաշվարկային տարվա որևէ ժամանակահատվածում համակարգի օպերատորի կողմից ներգրավված սարքավորումների անվանական հզորությունների գումարի առավելագույն մեծությունը՝ առանց տվյալ ամսում

նորոգման դուրս բերված սարքավորումների անվանական հզորությունների գումարի:

4. Ընկերության կողմից էլեկտրաէներգիայի (հզորության) առուվաճառքի պայմանագրային պարտավորությունները համարվում են կատարված, եթե տվյալ ամսվա պայմանագրային հզորությունների կազմում ընդգրկված սարքավորումները տեխնիկապես սարքին վիճակում գտնվում են համակարգի օպերատորի տրամադրության տակ և պատրաստ են զարգացնել նրա կողմից պահանջվող հզորությունը:

5. Համակարգի օպերատորի կողմից պահանջվող հզորությունը չի կարող գերազանցել սարքավորումների էներգետիկ բնութագրերով որոշվող այն առավելագույն հզորությունը, որը տվյալ սարքավորումը կարող է զարգացնել, հաշվի առնելով արտաքին սահմանափակող գործոնները (պայմանները)՝ ջերմային ու ատոմային կայաններում և ջրի ելքը՝ հիդրոէլեկտրակայաններում:

6. Սարքավորումների կամ շինությունների տեխնիկական վիճակի կամ վառելիքի անբավարար քանակի պատճառով պայմանագրային հզորության սահմանափակումները համարվում են էլեկտրաէներգիայի (հզորության) առուվաճառքի պայմանագրային հզորության խախտումներ: